Արձանագրություն N 2

«ՇՀԱՊՁԲ-15/15-5-2017-ՀՄ-ԵՊԲՀ» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

04.05.2017թ.
ժամը՝ 09:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Լ.Դանիելյան
Հանձնաժողովի անդամներ՝	Կ.Մկրտչյան, Է.Միրոյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Ռ. Եգանյան

Բացակայում էր՝
Ժ.Դավթյան

1«ՇՀԱՊՁԲ-15/15-5-2017-ՀՄ-ԵՊԲՀ» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերի ներկայացման վերաբերյալ

1.1. Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները՝

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Գտնվելու վայրը
1	Արֆարմացիա ՓԲԸ	ք.Երևան, Մյասնիկյան 1/6
2	Դեզսերվիս ՍՊԸ	ք.Երևան, Գալշոյան 8/27

1.2 Տվյալներ ծրարը կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին.

ՇՀԱՊՁԲ-15/15-5-2017-ՀՄ-ԵՊԲՀ ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցող ընկերությունների կողմից ներկայացված ծրարները կազմված են ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. «ՇՀԱՊՁԲ-15/15-5-2017-ՀՄ-ԵՊԲՀ» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը չկայացած հայտարարելու և հայտ ներկայացրած մասնակիցներին հայտերի վերադարձման վերաբերյալ

Հիմք ընդունելով ՀՀ ՖՆ նախարարի տեղակալի 03.05.2017թ. թիվ 03/73-3/7419-17 2017-04-28 գրությունը, հանձնաժողովը որոշեց «ՇՀԱՊՁԲ-15/15-5-2017-ՀՄ-ԵՊԲՀ» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը հայտարարել չկայացած, հայտ ներկայացրած մասնակիցներին սահմանված ժամկետում վերադարձնել ներկայացրած հայտերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Կից ՖՆ նախարարի տեղակալի 03.05.2017թ.

թիվ 03/73-3/7419-17 2017-04-28 գրության պատճենը

3. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ստորագրությունները

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Լ.Դանիելյան

Անդամներ՝ _____ Կ.Մկրտչյան

_____ Է.Միրոյան

Քարտուղար՝ _____ Ռ. Եգանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1

Հեռ.՝ (+374 11) 800 , ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

03/73-3/7419-17 2017-04-28

ԵՐԵՎԱՆԻ Մ. ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐ
ՊԱՐՈՆ ԱՐՄԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ

ՊԱՏՃԵՆԸ՝ ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՃԵՆԸ՝ ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՊԱՏՃԵՆԸ՝ «ԽԱՉՊԱՐ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ ՍՄԲԱՏ ԲԱԼԱՍԱՆՅԱՆԻՆ

1474
03 05 17

Հարգելի պարոն Մուրադյան

Հայտնում ենք, որ 2017 թվականի ապրիլի 25-ից ուժի մեջ է մտել «Գնումների մասին» ՀՕ-21-Ն ՀՀ օրենքը (այսուհետ՝ Օրենք), որով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգ նախատեսված չէ: Այսինքն, Օրենքով նախատեսված պատվիրատուները 2017 թվականի ապրիլի 25-ից իրավասու չեն կազմակերպել նշված ընթացակարգով գնման գործընթաց: Ընդ որում, գնման գործընթացը համարվում է կազմակերպված՝ գնման հայտարարությունը և հրավերը գնումների պաշտոնական տեղեկագրի՝ www.gnumner.am ինտերնետային կայքում հրապարակման պահից:

Այս կապակցությամբ հայտնում ենք, որ նշված կայքում հրապարակված տեղեկատվության համաձայն՝ Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանը 25.04.2017թ.-ին կազմակերպել է «ՇՀԱՊՁԲ-15/15-5-2017-ՀՄ-ԵՊԲՀ» ծածկագրով քիմիական նյութերի գնման ընթացակարգ, ինչը չի համապատասխանում Օրենքին՝ վերոհիշյալ հիմնավորմամբ: Ավելին, նշված գնման ընթացակարգի վերաբերյալ

ստացվել է «Խաչպար» ՍՊԸ-ի՝ ՀՀ ֆինանսների նախարարության թեժ գծին կատարված ահազանգը (կցվում է), որով վերջինս տեղեկացրել է, որ վերոհիշյալ ընթացակարգի գնման առարկայի տեխնիկական բնութագիրը կազմված է խտրական հիմունքներով:

Ելնելով վերոգրյալից հայտնում ենք, որ հիշյալ գնման ընթացակարգն անհրաժեշտ է հայտարարել չկայացած և կազմակերպել Օրենքով նախատեսված գնման նոր մրցակցային ընթացակարգ՝ հաշվի առնելով նաև «Խաչպար» ՍՊԸ-ի ահազանգով բարձրացված խնդիրը:

Միաժամանակ, եթե առկա են նմանատիպ՝ Օրենքի պահանջներին անհամապատասխան կազմակերպված այլ գնման ընթացակարգեր ևս, ապա դրանք նույնպես անհրաժեշտ է հայտարարել չկայացած և կազմակերպել Օրենքով նախատեսված գնման նոր մրցակցային ընթացակարգեր:

Խնդրում ենք արդյունքների մասին տեղեկացնել ՀՀ ֆինանսների նախարարությանը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԿԱՐԵՆ ԹԱՄԱՋՅԱՆ

Կատ՝ ՊՆՖՀ և ՊԳՄ վարչություն
հեռ. 011 800 258